ՄԱՆԿԱՎԱՐԺ

№№ 5—6 XXV ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ XXV 1907

XXV **ԱՂԲԻՒՐ** XXV

1907 ԲՈՎ՝ ՆԴԱԿՈՒԹԻՒՆ №№ 5—6

Նորը և հինը Պատկեր
Գիւղացու վշտերից՝ Երազ *Կ. Կ. Մելիք-Շահնազարեանց*
Աքին և մրջիւնները (շար. և վերջ) Լ. Մելիք-Ադամեանց
Կռունկ, մեր երկրէն խաբրիկ մը չձնիս Պատկեր
Ինչ ըլլայն է որ խեցիքը աղմկում են (լեգենդ) Աբ. Տէկոյեան
Հոտաւէտ մեխակ Գ. Ֆ. Մատի եան
Ժրաջան թռչուններու Պատկեր
Բանւորի գիրքը (Պրոլետարի տօնը) Յով. Սոլովեան
Հեշտահաւատ և անհոգատես րնկերներս (6 պատկերով) Զարօնի
Դարբնապետը (ոտանաւոր) Շատել-Արաբ
Զարմանալի հէքիաթ Սկյրի
Եկէք անուշ տենչեր (բանաստեղծ.) Յար. Պետրոսեան
Մայիսեան Թագուհու Թագադրութիւնը Զ. Տ. Գ.
Մանկական Վիշտը (բանաստեղծ) Հասո
ՉԻԱՐՃԱԼԻՒ Սրամիտ Առիւծը, Հանելուկ, Բայատրութիւն
Նորագոյն հրատարակութիւններ, Յայտարարութիւններ։

Մեր աշխատակիցներին

Խմբագրութիւնս հնարաւորութիւն չունի իր բոլոր աշխատակիցներին, որոնք այս XXV տարւայ ընթացքում պէտք մի յօդուած ունեն տպագրած ԱՂԲԻՒՐՈՒՄ, առանձին-առանձին նամակներով դիմելու և խնդրելու, որ փութով հասցնեն իրանց լուսանկարները, որպէսզի կարելի լինի այս տարի լոյս ընծայել ԱՂԲԻՒՐԻ աշխատակիցների պատկերներից կազմած Ալբոմ-Albumախը։

Այսու յայտնում ենք, որ իրանց լուսանկարները մեզ չուղարկողները զրկում են խմբագրութեանս կատար ածելու իր տենչանքը՝ առանց բացառութեան լոյս ընծայելու բոլոր աշխատակիցների պատկերները, անկախ նրանից թէ այսօր նրանք նոյնիսկ բարեկամ չեն ԱՂԲԻՒՐԻՆ։

ՀԱՄԱՆՀԻՆՊԵՐՈՐՊ ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՊԸՐ

№№ 5—6 ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1907

Ն ո ր ք և ի ն ք

Պատմեցէք այս պատկերի բովանդակութիւնը

ԳԻՂԱՑՈՒ ՎԸՏԵՐԻՑ

ՐԱՇՏ

I

Կապել է երկինք, անձրև չէ գալիս,
Արտերն ու մարգեր ծարաւ են ջրի,
Չորացած գետինը ճեղքեր է կազմել,
Սպրդնել տերև թուփ ու ծառերի։

Կեանք չէ երևում ընդարձակ դաշտում,
Տօթից, արևից քաշուել են թռչունք,
Ցամքել են վաղուց գիւղի առուներ,
Բարակել միակ աղբիւրի ակունք։

Ա՜խ, Աստուած, անձրև, կանչում են մարդիկ
Գիշեր ու ցերեկ ազօթք մրմնջում՝
Անձրե՛ւ, Տէր Աստուած. խնայիր երկրին,
Մեր արտ ու այգի ձեռից է ընկնում...

II

Երկինքը կապած մնաց շաբաթներ.
Խանձուեցին արտեր, մարգեր չորացան.
Ծառի տերևներ կոթից կտրած՝
Թոշնած-թոռոմած գետին թաֆուեցան։

Աստուած մեզանից երես շուռ տուաւ,
Ասային ծերերը, վայ ու վէյ արին,
Մեր մեղաց համար մեզ պատիժ տուաւ,
Մենք ինչով կապրենք. վայ մեր ու օրին։

Կ. Կ. Մելիք-Շահնազարեան

ՍԱՓԻՆ ԵՒ ՄՐՋԻՒՆՆԵՐԸ

(Սկիզբը Պղպիւր № 4)

Կատուաձագի հետ այդպէս անգթօրէն վարուելը էժան չը նստեց Սաքուն, այլ նա ևս պատժուեց իր այդ անխիղճ արարքի համար։ Որովհետև դայրացած մրջիւնները նրան էլ հանգիստ չթողին. այլ բարձրանալով նրա ոտերի վրայով՝ մեծ եռանդով սկսեցին կծել ու կծոտել։

Սաստիկ ցաւից Սաքին սկսեց պա՛պար-պա՛պար խաղալ, այսինքն՝ նա մին ոտները գետնին էր տոփում-խփում, մին բարձրուցածքի անում—ոտի մէկը վերցնում, միւսը վայր դնում, մին վեր-վեր թռչկոտում, կամ ոտներն իրան քամում, որպէսզի մի կերպ կարողանայ մրջիւններին իրանից դէն քշել, նրանց ձեռքից ազատուել։

Սակայն մրջիւնները առանց ուշ դարձնելու Սաքու այդ ճիգ ու ջանքերին, շարունակում էին կծոտելով վեր ու վեր բարձրանալ, մինչև հասան նրա վզին, երեսին։

Խեղճ երեխան ուղղակի մոլորուեց։

Ա՛յն է, հա՛, քիչ մնաց զուն կցէը—լաց լինէը, բայց հօր ձայնը լսելով՝ իրան պահեց—էլ լաց չեղաւ։

Հայրը զարմանալով, որ Սաքին շատ ուշացաւ, սկսեց ձայն տալ.

«Սա՛քքի՛ս... ա՛ Սա՛ք... Հէ՛-հէ՛է, Սա՛քի, Սաքի՛»...

Եւ մէկ էլ յանկարծ ինչ տեսնի. կատուաձագը վազէվազ դէպի իրան է գալիս ամբողջովին ծածկուած մրջիւններով։

Ողորմելի կենդանին վազում էը, որքան ոտերում ոյժ ունէը ու վազելիս էը դէսուդէն էը անում, մին-մին էլ կանգ առնում, մէկ այս, մէկ այն թափ տալիս, ցնցվում, իրան թափահարում, բայց և այնպէս մրջիւններից ազատուել չէը կարողանում։

Սաքու հօր մեղքը եկաւ. նա խղճաց փոքրիկ փիսոյին. ուստի հէնց-որ կատուն մօտ եկաւ մլաւելով, որ

կարծես օգնութիւն էր խնդրում, նա իսկոյն վերցրեց և տարաւ աղբիւրի սառը ջրում լողացրեց։

Ճիշտ է, կատուները չեն սիրում, որ իրանց մորթին թրջուի, բայց այս անգամ համբերեց, որովհետև մրջիւնների պատճառած ցաւն ու կսկիծը անչափ էր։

Սաքու հայրը երբ տեսաւ, որ կատուն ազատուել սաստիկ տանջուելուց և հանգստացաւ, գնաց որդուն գտնելու։

Մի քիչ առաջ գնալով՝ նա կանգ առաւ զարմացած, երբ տեսաւ որդուն շորահան կանգնած և ամենայն եռանդով քոցին-քոցին անելիս։

—Այդ ինչ բանի ես, Սաքիս... Չա՜, հասկացայ. երևի թէ դու ես կատուի նման ուզում ես՝ մրջիւններից ազատուես։

—Ա՛խ, հայրիկ-ջան, որ իմանաս՝ ինչպէս սաստիկ են կծում։

—Այդ ես վաղուց գիտեմ, սիրելիս. հիմա դու լսացիր։

—Ո՛րքան չար են եղել այս փոքրիկ...

—Չարը դրանք չեն. այլ դու,—որդու խօսքը կտրեց հայրը.— ես քեզ չասացի՞՝ հէնց-որ հասնես մրջնանոցին, իսկոյն ինձ կանչիր։ Ինչո՞ւ չկանչեցիր։

—Մոռացայ, հայրիկ.—ամաչելով պատասխանեց Սաքին։

—Հը՛... Պարզ երևում է, որ դու դրանց հանգստութիւնը խանգարել, որևէ վնաս ես տուել և կամ դրանց խաղաղ աշխատանքին արգելք եղել, ինչ-որ մրջիւնները չեն սիրում, և սաստիկ պատժել գիտեն իրանց հետ այդպէս վարուողներին։

—Բայց դու ինձ այն ասա,—խօսքը շարունակեց հայրը,—թէ կատուն ինչո՞ւ էր այնպէս մրջնաթաթախ։ Ինքը հո չէր կանգնել, որ մրջիւնները այնպէս բազմութեամբ բարձրանային իր վրայ... Հը՞, ասա, է։

—Ես դրեցի նրան մրջիւնների մէջ, հազիւ լսելի ձայնով պատասխանեց Սաքին։

—Ինչո՛ւ, սիրելի՛ Սաքի. խեղճ կենդանին քեզ ինչ էր արել, կամ անմեղ միջատները քեզ ի՞նչ վնաս էին տուել։

Սաքին մնաց լուռ։ Բայց եթէ ուզենար էլ, ինչ կարող էր ասել, քանի-որ զգում էր իր մեղաւորութիւնը։

Հայրը հասկանալով որդու հոգեկան զրուխիւնը, որ նա արդէն զղջացել է իր արածի համար, էլ չսկզեց, որ նա իր հարցին պատասխան տայ։

—Ուրեմն թող այս մի լաւ դաս լինի քեզ համար, սիրելիս,— ասաց հայրը.—կամ ինչպէս ասում են՝ «այս ինձ խրատ, որ եղ չգանես կատահաս»։ Ինքդ այդպէս տանջուելով, ցաւ ու կսկիծ զգալով, պարզ կը հասկանաս, թէ որքան անխիղճ ես վարուել կատուի հետ։

Սաքին ամօթից կարմրատակել, պիլ-կարմիր էր դարձել։

—Դէ մէկ ինձ ասա տեսնեմ, սիրելի՛ Սաքի, եթէ չար մարդիկ գան և կամենան մեզ նեղութիւն տալ, ուզենան մեր ունեցածները յափշտակել տանել կամ որևէ կերպով մեզ վնաս հասցնել, ինչ կանես. կը թողնե՞ս որ նրանք իրանց ուզածն անեն։

—Վա՛յ... ինչի՞ եմ թողնում. չեմ թողնիլ։

—Բայց դու փոքրիկ տեղովդ ինչ կարող ես անել։

—Ինչ կարող եմ։

—Այո՛։

—Վա՛յ... Փայտով կը խփեմ, քարով կը տամ վէր կը դցեմ, մեր մեծ շանը հէս կ՛անեմ ու չեմ թողնիլ։

—Այո՛, հոգիս, և շատ էլ լաւ կանես, հէնց այդպէս էլ հարկաւոր է։ Որովհետև եթէ ուզում ենք անվտանգ ու հանգիստ ապրել, երբէք թոյլ չպէտք է տանք, որ օտարները գան և մեզ վնաս տան կամ մեր սեպհական գործերի մէջ խառնուեն և մեր չուզած բաները մեզ անել տան, քանի որ նրանք իրաւունք չունեն։ Մէկ խօսքով՝ մենք պէտք է ամեն կողմով մեզ պաշտպանել գիտենանք մրջիւնների նման։

—Մրջիւնների նման, զարմացաւ Սաքին։

—Այո՛. մրջիւնների նման. դու մի՛ նայիր նրանց փոքրիկ լինելուն։ Այդ աշխատասէր ու ժիր արարածները պստիկ են, բայց ճատիկ են. նրանց մէջ անչափ զարգացած է թէ ինքնապաշտպանութեան և թէ միմեանց օգնելու զգացմունքը. այնպէս որ այդ փոքրիկ արարածները շատ և շատ կողմով օրինակ կարող են լինել մարդկանց համար։

—Ի՞նչ են անում մրջիւնները։

—Շատ բան, սիրելիս։

—Բայց նրանք շատ են պստիկ-պստիկ։

—Այո՛, ճիշտ է, և հէնց իրանք էլ կարծես իմանալով այդ բանը և զգալով որ իրանցից ամեն մինը մենաւոր ամենակ շատ բան շինել չի կարող, դրա համար էլ միշտ միացած ոյժով են աշխատում։ Եւ նրանք այդպէս միացած, ընդհանուր ոյժով իրանց համար սիրուն-սիրուն, լայն ու ընդարձակ բնակարաններ են շինում, պաշար պահելու մեծ-մեծ շտեմարաններ կառուցանում. իրանց անցուդարձը հեշտացնելու նպատակով գանագան ուղղութեամբ ճանապարհներ են յարդարում. այլև միասին ցանում, միասին հնձում և միասին էլ իրանց պաշարը պատրաստում են, որից ամենքը ևս հաւասարապէս օգտվում են։ Իսկ վտանգ եղած ժամանակն էլ զարձեալ միացած ոյժով՝ կարծես մի սիրտ, մի հոգի զարձած, այնպէս աներկիւղ, այնպէս զարմանալի բաջութեամբ են պաշտպանվում, կռվում ու դիմադրում թշնամուն՝ անպատճառ յաղթելու բուռն յանկութեամբ, որ համարեա միշտ էլ կարողանում են իրանց թշնամուն յաղթել։ Իսկ այդ ամենը այնպիսի ընտիր յատկութիւններ են սիրելիս, որոնց եթէ մարդիկ հետևեն, կեանքից միշտ գոհ կը լինեն, որովհետև լաւ պայմանների մէջ կը գտնուեն, իրանց ապրուստն աւելի լաւ կը լինի, քան որ է այժմ։

—Ես այդ բանները չգիտէի, հայրիկ-ջան։

—Ոչինչ, հոգիս, դու դեռ շատ բան չգիտես, այլ հետզհետէ քիչ-քիչ պէտք է սովորես, միայն այն պայ-

մանով. որ սովորելու հաստատ կամք ունենաս, մի լաւ բան սովորելու համար երբէք չծուլանաս, այլ միշտ, միշտ աշխատես Բայի դրանից յուսով եմ թէ այսօրուայ իմացածները էլ միտդ կը պահես և այսուհետև քո զուարճութեան համար ո՛չ-ոքի անվնաս ու խաղաղ աշխատանքին արգելք չես լինիլ. ապա թէ ոչ՝ լաւ իմացած եղիր, սիրելիս, որ ինչ որ ցանես, հէնց այն էլ կը հնձես։

Լեւոն Մելիք-Ադամեանց

Կռունկ, ո՞ւստի կը գաս։ Կռո՛ւնկ, ծառայ եմ ձայնիդ։ Կռո՛ւնկ, մեր երկրէն խաբրիկ մը չունի՞ս։

Կռունկը եւ իր ձագերը



ԻՆՉԻ՞Ց Է, ՈՐ ԽԵՑԻՐԸ ԱՂՄԿՈՒՄ ԵՆ

(Լեգենդ)

Ծովային արքան—հզօր Նեպտունը—
Ծովի յատակում ունի իր տունը.
Ողջը բիւրեղեայ. ճոխ այգինները
Գրկել են նորա շէն պալատները։
Շէն պալատները ճոխ են և հարուստ,
Պատերը խեցի, նախշերը զուտ բուստ.
Մարգարիտները երկար հիւսերով
Կախուած են ներսը պէս-պէս ձևերով.
Փայլուն ձկներն են պահապան դռան
Գիշեր և ցերեկ հսկում են վրան.
Ծովի իշխողին անթիւ աղջիկները
Գողտրիկ, նազելի յաւերժահաբսներ
Ե՛ւ ծառայում են, և՛ զբաղեցնում,
Հազար տեսակի երգում ու պարում։
Արքայի աչքից ոչինչ չի վրիպում.
Նա հանգիստ չունի և չի էլ ննջում.

Նա հետևում է ձկների լողին
Եւ հրէշների այլանդակ խաղին.
Նաև տեսնում է՝ ինչպէս նաւերը
Ջրի մէջ փռած ջարդւած թևերը
Դուռ ալիքների կամ քամու ձեռքից
Իջնում են անդունդ ծովի երեսից.
Երբեմն էլ արքան հեծնում է իր ձին՝
Ձեպընթաց ձուկը՝ ծովային զելփին,
Գնում շրջելու իր տէրութիւնը,
Տեսնել ու լզգալ իր մեծութիւնը։

II

Այսպէս մի անգամ արքան դուրս գնաց
Եւ մի երկու օր ուրիշ տեղ մնաց.
Մի չքնաղ աղջիկ մօտեցաւ պատին,
Պատից պոկեց գոյնզգոյն խեցին.
Կապեց մազերից, իրան զարդարեց
Շատ ուրախացաւ, շատ երգեց, պարեց.
Հզօր Նեպտունը տուն վերադարձաւ,
Տեսաւ կորուստը և շատ բարկացաւ.
—Ո՞վ է գողացել թանկագին խեցիս,
Ամբողջ աշխարհում միակ սիրելիս.
Թող կորչի գողը իմ տէրութիւնից,
Ուչքիս չերևի հէնց այսօրւանից։
—Ես եմ վերցրել քո խեցին, արքայ,
Մ'թէ զղջողին թողութիւն չը կայ.
Շրգիտութեամբ եմ արել սխալը
Ինձ խիստ գրաւեց խեցիի փայլը.
Ներիր ինձ, ներիր, ինձ մի աքսորիր,
Մի հանիր ծովից, գահիդ մօտ պահիր։
Յաւերժահարսը խնդրում էր, լալիս,
Արքայի խեցին իրան յետ տալիս։
Նեպտունը տեսաւ անկեղծ զղջումը
Եւ մինչև անգամ խղճաց մտքումը.
Սակայն չներեց Թշւառ աղջան
Միայն իր խեցին պարգևեց նրան։

Յաւերժահարսը նորից ապաչեց,
Ընկաւ ոտները, ծնկները պաչեց.
—Օ՜, հրզօր արքայ. կարօտից, վշից
Անշուշտ կը մեռնեմ, երբ զրկւեմ ծովից.
Ծովի շաչիւնը, ծովի ծփանքը
Կազմել են կեանքիս քաղցր պատրանքը.
Օրօր են ասել ինձ օրօրոցում
Ու քընացրել ջրերի ծոցում.
Հիմա դու եթէ ինձ չես խնայում,
Բնազանից միայն ես այս եմ խնդրում.
Ծովի շաչիւնը տուր ինձ յիշատակ,
Որ ՚շոյէ հոգիս ամեն ժամանակ.
Ուր էլ որ գնամ, ուր էլ որ լինեմ՝
Հարապատ ծովիս կարօտը առնեմ։
—Լաւ. ասաց արքան. տուր ինձ այդ խեցին.
Խեցին վեր առաւ, դրեց բերանին.
—Ծովի ծփանքը, ծովի շաչիւնը
Հէնց այսօրւանից պահիր քո մէջը.
Բոլոր խեցիքը թող այդպէս անեն,
Եթէ ցամաքի վրայ պատահեն.
Խեցիի ծակից փչեց Նեպտունը
Եւ լցրեց մէջը ծովի շաչիւնը.
Ապա յետ տուեց խեցին աղջկան
Ու հրամայեց աքսորել նրան։
Ընկերուհիքը արտաքսւած կոյսին
Տարան ու թողին ծովի երեսին.
Գոռ ալիքները գնացին-եկան
Յաւերժահարսի յետևից ընկան.
Թէ որտեղ մնաց այնուհետև նա՝
Այդ մինչև այսօր գաղտնիք կը մնայ։
Բայց դատարկ խեցին որտեղ էլ լինի՝
Մարդ որ վերցնի ականջին դնի,
Անշուշտ կը լսէ ծովի շառաչիւն
Գոռ ալիքների ազմուկ ու զոչիւն։

Աբ. Խնկոյեան

ՀՈՏԱԻԷՏ ՄԵԽԱԿ

Ըիօրդայ ուսումնարանի աւագ վարժուհին դարնանը, մայիսեան տօնին Վարսենիկին ուրիշ շատ աշակերտուհիների հետ դաշտը տարաւ զբօսնելու։ Աշակերտուհիներից մի քանիսը սկսեցին աջ ու ձախ վազվզել թիթեռներ և միջատներ որսալ։ Մի քանիսն էլ մնացին իրանց վարժուհու մօտ և ցոյց էին տալիս նրբան մի կարմիր միջատ, որին հայ գիւղացին զատկական ճիճու է անուանում։ Իսկ Վարսենիկը զբաղւած էր դաշտի ծաղիկներից մի փնջիկ պատրաստելով։ Նա շատ էր սիրում տանը դաս պարապելիս զբաղեցնի վրայ ծաղիկներ ունենալ։ Մի քանի ժամ խաղալուց յետոյ բոլոր աշակերտուհիները վարժուհու մօտ ժողովեցան ու նստեցին իրանց նախաճաշիկը վայելելու։ Սրանից յետոյ երկու ժամ էլ զբօսնեցին ու ճաշի ժամանակ դպրոց վերադարձան, որտեղից էլ ամեն մէկը իրանց տները գնացին։ Վարսենիկն էլ տուն եկաւ, նա շատ ուրախ էր, որ մի փնջիկ ծաղիկ ունի, թէև նրանք այնքան հոտաւէտ չէին, բայց նա զոհ էր իր ձեռքով պատրաստած փնջիկով։

—Մայրիկ, ասաց Վարսենիկը, ես այսօր դաշտում շատ չը խաղացի, որովհետև իմ շատ սիրած ծաղիկների հետևից էի ընկել։ Ահա, տես մայրիկ, դաշտի ծաղիկներից մի փնջիկ եմ կապել, բայց ափսոս, որ նրանք այնքան հոտաւէտ չեն, ինչպէս որ մեր տանու մեխակի ծաղիկը, բայց տեսքով շատ գեղեցիկ են։

—Դու շատ լաւ ես արել, ասաց մայրը Վարսենիկին, որ ծաղիկներ քաղելով ես պարապել, արի ինձ

մօտ, ես քեզ մէկ հատ մեխակի ծաղիկ կը տամ, դու նրան փնջիկիդ մէջ կը դնես, որի անուշ հոտը կը տարածւի և միւս անհոտ ծաղիկների վրայ։

Ասաց մայրը և կատարեց. նա սենեակի ծաղկամանից մի մեխակի ծաղիկ կտրեց և աղջկան տւեց։ Վարսենիկը շնորհակալութիւն յայտնեց մօրը և վճռեց, որ միւս օրը մեխակն ուսումնարան տանի և իր սիրելի վարժուհուն ընծայի. նա այդպէս էլ արաւ։ Բայց երբ եղաւ նրա զարմանքը երբ, ուսումնարան գնալիս, մեխակի ծաղիկը փնջիկի միջից հանեց, տեսաւ, որ փնջիկի միւս անհոտ ծաղիկներն էլ մեխակի հոտն էին արտաղրում. նա արդէն իր մօր ասածը կատարւած տեսաւ։ Վարսենիկը վազեց իր մօր մօտ և ուրախ սրտով պատմեց թէ ինչպէս մէկ հոտոտաւէտ մեխակի ծաղիկը իր անուշ հոտը տարածել է միւս անհոտ դաշտային վեղեցիկ ծաղիկների վրայ։

— Այո, սիրելիս, ասաց մայրը, բարի մարդն էլ իր ունեցած բարութիւնից ուրիշներին էլ է օգուտ տալիս, ինչպէս որ այդ մեխակի ծաղիկը տարածել է իր անուշ հոտը միւս ծաղիկների վրայ։ Այս բանը քեզ համար լաւ օրինակ լինի, որ դու էլ քո ընկերուհիներին օգտակար լինես քո ունեցած շնորհքով։ Եւ ինչ բանով որ կարող ես օգնել չունևորներին և կարօտեալներին՝ օգնիր այնպէս, ինչպէս որ այդ անշունչ ծաղիկը տւել է իր անծանօթ դաշտի ծաղիկներին։ Այդպէս վարւելուդ համար Աստուած էլ քեզ կօգնէ և կօրհնէ։

Վարսենիկը դոհ սրտով հեռացաւ մօրից և երբ նա ուսումնարան հասաւ՝ հոտաւէտ մեխակի ծաղիկը վարժուհուն ընծայեց, իսկ իր մօրից ստացած այդ օրւայ խրատները իր ընկերուհիներին պատմեց։

Այս պատմութիւնը մի թանկագին ընծայ էր, որ Վարսենիկը տւեց իր ընկերուհիներին։

Գ. ր. Մատիկեան

Թռչունները գալիս են

ՊՐՕԼԵՏԱՐԻ ՏՕՆԸ

I

Եսմ՛ծ ես, ի հարկէ, սիրելի Ռուբէն, մշակին, բանուորին, այդ չարքաշ բազդի խորդ զաւակին։ Բայց դարձրել ես քո ուշադրութիւնը դրա վրայ. դադրեցրել ես քո միտքը այդ մարդկանց վրայ։ Գիտեմ, որ ոչ...

Միշտ խաղացել, միշտ թռչկոտել ես։ Քո առաջն է ազատ երկինքը, աբեզակի լոյսը, շոյող ջերմութիւնը...

Դու ձանձրանում ես, երբ քեզ երեկոները կանչում եմ այն էլ ոչ դաս սերտելու, այլ լսելու, թէ ինչպէս մարդիկ, հազարաւոր մարդիկ, նոյնիսկ միլիօնաւոր շնչեր քո խաղի ժամանակ կարօտ են լուսի, ջերմութեան, կարօտ են նոյնիսկ մի կտոր հացի։ Դու փակում ես քո ականջները քո փոքրիկ ձեռներով, քեզ դուր չեն գալիս իմ պատմածները...

Բայց ոչ, ես պիտի քեզ յաղթեմ. ես պիտի քո ուշադրութիւնը հրաւիրեմ այդ մարդկանց, այդ չքաւոր բանուորների վրայ, կամ ինչպէս եւրոպական բառով դրանց անւանում են՝ պրօլետարի վրայ։

Պրօլետա՛ր...

Ի հարկէ, դա հայերէն խօսք չէ, բայց լսիր՝ իմացիր, որովհետև ամբողջ աշխարհը դրանց այդ բառով է կոչում։

Այժմ լաւ յիշեցիր այդ բառը, չէ՞...

Աշխարհիս ամեն երկրում այդ չքաւոր պրօլետարների կեանքը միատեսակ անտանելի է։ Նրանք քնում են այնպիսի նկուղներում, որտեղ չեն թափանցում արեգակի ճառագայթները, ապրում են այնպիսի հնացած վերնայարկերում, որտեղ ազատներն են միայն բուն շինում։

Պրօլետարը նոյն իսկ ճրագ չի ունենում վառելու. լուսնեակ գիշերները պատուհանից լուսնի սառն ճառագայթներն են միայն ժպտում նրան։

Օ՜, սիրելիս, այդ աշխարհը մեզ համար դրախտ պիտի լինէր, եթէ չըգտնուէին չար մարդիկ, որոնք աշխարհի բոլոր բարիքները իրանց միայն չը սեպհականացնէին։ Կան այնպիսիները և նրանք կազմում են մարդկութեան շատ փոքր մասը։ Հարուստներն են դրանք։

Դրանք սեպհականացրել են հողերը, ջրերը, մեծ-մեծ գործարանները, ֆաբրիկները, մեքենաները, տրամուայը, երկաթուղին, փողը,—իսկ պրօլետարի համար ոչինչ չեն թողել... Պրօլետարին դրանք միայն վարձում են և ստիպում են օրւայ մէջ այնքան բան անել, որ խեղճ բանուորը գալիս է տուն դադրած, ջարդուած... իսկ օրավարձը այնքան քիչ է լինում, որ չի հասնում նրա ծախսերին. գալիս է տուն՝ հաց չունի, քնում է շատ անգամ ընթրիք չարած...

Հարուստը նրան այնքան վարձ չի տալիս, որ բանուորը կարողանայ համ իրան կերակրել, համ երեխաներին ուտեցնել, ուսման տալ։

Կէս-կուշտ, կէս-քաղցած երեխաները լղարում են, թուլանում են, և այդ է պատճառը, որ շատ-շատերը կարգին ուսում առնել չեն կարողանում։

Բայց այդ պրօլետարը իր չքաւոր չարքաշ վիճակի համար միայն իրան է պատասխան։ Եթէ նա կրթուած լինէը, եթէ նա կարողանար փոքր հասակից դպրոց յաճախել, գրքերը նրան կասէին, թէ ինչ պէտք է անել, ինչ միջոցների դիմել, որ բանուորի չարքաշ կեանքը բարեփոխուէը։

Բայց չըմեղադրենք դրանց բոլորին։ Կան դրանցից բաւականին հասկացողները, գիտակիցները, որոնք կարդում են թէ լրագիրներ և թէ գրքեր և այդ գրքերից շատ-շատ լաւ-լաւ բաներ են քաղում։ Դրանք մինչև անդամ աշխատում են, որ լուսաւորեն իրանց անգիտակից ընկերներին։

Այսօր կը պատմեմ քեզ այդ դիտակից պրօլետարնե-
րի կեանքից մի փոքրիկ պատմութիւն, կամ աւելի լաւ է
ասել նրանց տարեկան տօնի մասին մի քանի տեղեկու-
թիւններ կը տամ քեզ։ Դու չես լսած անկասկած այդ
տօնի մասին, ուրեմն լսիր։

Երկար խաղերից յետոյ պէտք է հանգստանալ, իսկ
այդ հանգստութիւնը աւելի քաղցր է թւում, երբ լսում
ես չը լսած պատմուածքներ, նոր-նոր դրոյցներ...

II

Բանւորը-պրօլետարը ամբողջ տարի աշխատում է,
նա տօն չունի։ Տեսնում եմ զարմանում ես... Զաւակիկ,
Զրօրհնէք—այո, բայց այդ տօները հարուստի համար են։

Ի՞նչպէս կարող է պրօլետարը ուրախանալ այդ օրե-
րին, երբ նա փող չունի, որ կարմիր ձու ներկէ, միջոց
չունէ, որ դոզինաղ պատրաստէ։

Բայց նա ունի իր սեպհական տօնը, մայիսի մէկը։

Դու հետաքրքրւում ես այժմ, դա ինչ տօն է, որ դու
չըգիտես, չես լսած, որ այդ օրը տօնեն դպրոցում կամ
բարեկամների շրջանում։

Բայց բոլոր աշխարհի գիտակից բանւորները, որոշել
են տօնել մայիսի մէկը։ Այդ օրը իր պահանջն է թելա-
դրում իրան ճնշողների, հարուստների, կամ ինչպէս ա-
սում են եւրոպական բառով՝ բուրժուայի դէմ։

Բանւորները պահանջում են այդ օրը, որ կրճատուեն
աշխատանքի ժամերը։ Բուրժուան բանեցնում է բանու-
րին 12—14 ժամ, իսկ այդքան աշխատելը մարդու ուժից
վեր է։ Զափազանց շատ աշխատելուց մարդս մաշւում է,
հիւանդանում է։ Մարդս պէտք է օրւայ մէջ 8 ժամ աշ-
խատէ, 8 ժամ հանգստանայ և 8 ժամն էլ լինի ազատ։
Ազատ ժամերին պիտի միասին հաւաքւել, զարճանալ,
խօսել, կարդալ... Ահա այդ է մայիսի մէկին բանւորի պա-
հանջը։ Եւ այդ բանից վախենում են հարուստ-բուրժուա-
նները, որովհետև դրանք չեն ուզում բանւորի աշխատանքի
ժամերը կրճատուեն։ Աշխատանքի ժամերի կրճատումը ձեռնո-
տու չէ հարուստներին, ի հարկէ այն հարուստին, որ ինքը

չի աշխատում, այլ ապրում է միայն ուրիշի աշխատանքով։

Մանաւանդ դրանք վախենում են բանւորի գիտակցութիւնից, երբ բանւորի գիտակցութիւնը բարձրանայ, նա ի հարկէ կը հասկանայ ներկայիս չարիքի պատճառները և կը դործանէ չարիքի հեղինակներին...

Իսկ գիտակցութիւնը զարգացնելու համար չէոր ժամանակ է հարկաւոր, միջոց է հարկաւոր...

Ահա թէ ինչու բանւորը բարձրացնում է իր ձայնը և մայիսի մէկին ութ ժամւայ աշխատանքի պահանջ դնում։

Այդ օրը ոչ ոք բանւորներից չի գնում գործարանները, չեն ապում լրագիրները, կառքերը, տրամւայը չեն բանում...

Շատ բան կարելի է ասել, սակայն աւելի լաւ է, որ բացես բանւորի գիրքը և կարդաս. այնտեղ նկարագրած են նրա վշտերը, կարիքները և այդ ցաւերի դարմանն ու ճարը։

Օ, սիրելի Ռուբէն, որքան ոգևորւում է բանւորը այդ օրը։ Նրա միակ փրկութիւնը բողոքի մէջ է։ Թող, որ այդ չարքաշը բողոքէ, բողոքէ մինչև այն օրը, մինչև ձեռք կը բերէ իր համար մարդավայել կեանք։

Բայց ես տեսնում եմ, որ դու անհամբեր սպասում ես, որ քեզ պատմեմ, թէ ինչպէս է տօնում մայիսի մէկը բանւորը։

Մի քիչ էլ սպասիր։

III

Մայիսի մէկին բանւորները մեծ-մեծ թափօրներով դուրս են գալիս փողոցները, մանն են գալիս խմբերով, կարմիր դրօշակներով։ Այո, կարմիր է նրանց դրօշակի գոյնը, կարմիր է այնպէս, ինչպէս արիւնը։ Բանւորը ուրիշ գոյն չի ճանաչում, նա այնքան շատ է չարչարւում իր կեանքում, որ այդ տանջանքը կարմիր գոյնի միջոցով է արտայայտում։

Եւ խրոխտ է թափօրի խմբական երգը։ Նրա մէջ դառն շեշտեր է լսւում բուրժուայի հասցէին, զօրեղ կոչ

է անուամ բոլոր պրօլետարներին, որ գան միանան բանուորի դրօշակի տակ։

Դու չես տեսել այդ հանդէսը։

Որտեղից էլ տեսած ու լսած լինես, երբ մեզնում նոր-նոր են սկսել այդ տօնը կատարել։

Այսքանն էլ իմացիր, որ բանուորն ազատ չէ այդ տօնը կատարելու։ Զարմանում ես։ Նա խաղաղ թափօր է կատարում, երգում է, շրջում է,—և չեն թողնում։ Այո, չեն թողնում, որովհետև որքան քիչ շրջեն այդպէս բանուորները, կամ աւելի լաւ է ասել բոլորովին չը շրջեն, այնքան աւելի ուրախ է բուրժուան։

Դու ի հարկէ չըմոռացար ձվ է բուրժուան։ Դա բանուորի աշխատանքի քամողն է, ինչ ասել կուզէ, նա չի էլ ուզիլ, որ թափօրներ կատարուեն, ճառեր խօսուեն, որովհետև այդպիսով անգիտակից բանուորը իր գիտակից եղբօրից կը սովորի բողոքել, պահանջել... Իսկ ո՞ր հարուստը կուզէ, որ իրանից խլեն նրա մեքենաները, հողերը, ջրերը, տրամւայները և այնպէս անեն, որ այդ ամենից օգտուեն հաւասարապէս ամենքը՝ թէ հարուստները և թէ աղքատները...

—Իսկ յետո՞յ,—տեսնում եմ ուզում ես հարցնել։

—Մի՛թէ կարելի է բոլորը մի անգամից պատմել... Տեսնում եմ, սիրելի Ռուբէն, այժմ շատ-շատ ես հետաքրքրւում պրօլետարի կեանքով։ Կարդա, միշտ կարդա բանուորի գիրքը և այն ժամանակ նրանց կեանքից շատ նորանոր բաներ կիմանաս։

Յ. Սօլօվեան



ՀԵՇՏԱՀԱՒԱՏ ԵՒ ԱՆՀԵՌԱՏԵՍ ԸՆԿԵՐՆԵՐ

Շատ ժամանակ չէ, որ Սիրունիկն ու Աշխոյժը միմեանց աչքի փուշ դարձան։ Վատ հարևանները կամեցան

նրանց կռւացնել, որպէսզի իրանք ազատ մնանեն նրանց բուրաստանը։

Հիս տւին երկու շներին անմեղ փիսօի վրայ, սակայն և պատժւեցին։ Բուրաստանի կարծրասիրտ

պահապանը Աշխոյժին շղթայից, իսկ Սիրունիկին էլ բանտարկեց նկուղում։

Սրանք՝ Սիրունիկն ու Աշխոյժը, որ ազատուեն շղթայից ու բանտից համոզուելու են հաշտ ձիալ միմեանց

հետ և խաղաղ աշխատանքով ապրել, թէ էլի խաբուելու են վատ հարևանից։

Զարուհի



ԳԵՐԲՆԵ-ԳԵՏԸ

—

Մուր ու քրտինքը պատել են ճակատ,
Թոլշոմած այտեր սեւ սալի են դառել.
Նա հէգ որդին է վշտի հարազատ.
Վաղուց է նրանից քաղդը ճերք վերցրել...

Հինգ, տաս տարիներ դարբնոցի միջին
Նա քոլորել է միշտ ախ ու վախով,
Նա կարօտ մնաց կեանքի լաւ օրին.
Այլ սեւ օրերն էլ անցան անէծքով...

Մուխ խոնաւ շէնքում, հնոցի կողքին
Ցուրտ ու կրակին նա ընկեր դառած՝
Միշտ սաբուկ, հլու իւր տիրոջ կամքին՝
Ազատ խօսելուց նա մնաց զրկուած...

Վաղ առաւօտից մինչեւ մուխ գիշեր
Կայծ ու ծխի մէջ ծեծում է զնդան,
Այսպէս շարունակ քոլորում օրեր
Ու հնչին վարձով պահում գնդաստան...

Շատէլ—Արաբ

ԶԱՐՄԱՆԱԼԻ ՀԷՔԻԱԹ

—

Մեր դասարանի բոլոր ընկերներով դուրս եկանք գարնանային առաջին զբօսանքը կատարելու լեռների վրայ։

Մեր ծովափնեայ փոքրիկ քաղաքում գարունը միշտ շուտ է գալիս։

Այս տարի բարեկենդանին ձիուներն արդէն հալւել և լեռները կանաչով ծածկւել էին։

Եւ մանուշակներն ինչքան շատ էին բուսել այնտեղ։

Մեր ուսուցչի հետ դիմեցինք դէպի «Պատղ ջրի» սարը և երբ հասանք, ամենքս ուրախ աղաղակներով ցրիւ եկանք և սկսեցինք վազվզել լերան լանջի վրայ։

Ոմանք վազում, պտոյտներ էին գործում, ոմանք լեռն էին բարձրանում, ուրիշները պառկել և գլորւում էին փափուկ խոտերի վրայ, իսկ շատերն էլ գլուխ-կոնծի էին տալիս։

Եւ ինչպէս հրճւում էինք, երբ ուսուցչի հետ ձեռք-ձեռքի բռնած, ծիծաղելով վազում էինք լեռն ի վեր և վերից վար։

Յաղացինք, զարճացանք և երգ ու կանչով շատ մանուշակ հաւաքեցինք ու յոգնեցինք։

Ինչպէս լաւ էր, երբ բոլորս յոգնած-յոգնած նստեցինք սարի լանջի վրայ, մի տափարակ տեղ՝ հանգստանալու։

Մեր առաջ փռւած էր ամբողջ քաղաքը։ Տեսնում էինք ծովը, որ անսահման տարածւում էր, և նաւահանգստում կանգնած էին անթիւ մեծ ու փոքր նաւեր։

Հանգստացանք, և լերան լանջի վրայ՝ առաջին անգամ այս գարնանը՝ հնչեց մեր խմբական ուրախ երգը։

Երգում էինք գարնան ու մայիսի երգը, ծաղիկները, կանաչները, մանկական ուրախութիւնը, և մեր ձայները բարձր ու բարձր հնչում էին ազատ լերան վրայ։

Նստոտել, պառկոտել էինք սարի լանջին՝ անկարգ ու խառն ի խուռն, և ամենքս անչափ ուրախ էինք։ Անչափ մանուշակ ունեինք և շատ վինջեր կպմռեցինք։

Ինչպէս անուշ էր ղրոյցը սարի վրայ և ինչպէս անուշ էր փչում փոքրիկ հովը։

—Ո՞վ կը պատմէ մի հերուն հեքիաթ, ասաց ուսուցիչը։

Ամենքն ուզեցին պատմել։

—Թող Շահրիկը պատմէ տեսնենք։

—Բայց հերուն պէտք է պատմէ։

—Այս մանուշակների պէս անուշահոտ պէտք է լինի այն հեքիաթը։

—Եւ այս հովի պէս դիւրեկան. .

Ամեն մէկը մի բան էր ասում, և բոլորը կանչում էին.

—Ի հարկէ, ի հարկէ։

Խեղճ Շահրիկը սկզբում շփոթուեց, բայց յետոյ ըսկսեց պատմել մի հեքիաթ։

Այն հեքիաթը մի պառաւի մասին էր։

—Է՜հ, չենք ուզում, չենք ուզում,—կանչեցին ամեն կողմից,—պառաւի հեքիաթ չենք ուզում։

—Ե՛ս պիտի պատմեմ,—ասաց Ֆօկուսնիկ Ասպիկը և սկսեց.

«Պար-չըկար մի վարժապետ»...

Ամենքն ուրախ ծիծաղեցին և սկսեցին ականջ դնել։

Շահրիկը լռեց, իսկ Ասպիկը շարունակեց.

«Զարմանալի վարժապետ էր այն վարժապետը։ Ասպի, ղրոյցի ժամանակ փոքրանում, դառնում էր աշակերտ, իսկ դասի ժամանակ մեծանում, դառնում էր վարժապետ...»։

—Ինչպէ՞ս ինչպէս էր փոքրանում,—հարցրին ամեն կողմից։

«Այդ բանը ոչ-ոք չէր իմանում. երբ խաղն ու զբօսանքը վերջանում էին և աշակերտները մանում էին դասարան, նրանք միայն այն ժամանակ էին տեսնում վար-

ժապեակին, իսկ երբ դասը վերջանում էր և դուրս էին գալիս խաղի, էլ էն վարժապետը չէր երևում. ինչքան ուզում էին, չէին կարողանում նրան տեսնել... Զարմանալի վարժապետ էր այն վարժապետը...»։

—Յետոյ, յետոյ։

«Յետոյ, յետոյ զարմանալի վարժապետ էր այն վարժապետը. . Եւ աշակերտները չէին իմանում, որ զարմանալի վարժապետ է այն վարժապետը...»

—Յետոյ ի՞նչ արին։

«Յետոյ մի բան արին. նրանք իսկի չէին տեսնում էն վարժապետին, միայն գիտէին՝ իրենք մի վարժապետ ունեն, որ իրենց շատ բաներ է սովրեցնում։ Շատ ուզեցին տեսնել նրան, բայց չըկարողացան և այն ժամանակ մի հեքիաթ յօրինեցին նրա մասին...»։

—Ի՞նչ հեքիաթ։

—Մի հեքիաթ։

—Պատմի՛ր։

— Չեմ պատմի։

—Կը ծեծենք։

—Վարժապետը չի թոյլ տայ։

—Ո՞ւր է վարժապետը...

—Ո՞ր վարժապետը...

Ամենքը ծիծաղեցին։

—Հը՛, մոռացել էք վարժապետին. ասասեցէք պատմեմ հեքիաթը,—ասաց ֆօկուսնիկ Ասպիկը և շարունակեց.

«Մի հեքիաթ յօրինեցին այն զարմանալի վարժապետի մասին... զարմանալի հեքիաթ էր այն հեքիաթը...»։

—Յետոյ, յետոյ։

Յետոյ, յետոյ զարմանալի հեքիաթ էր այն հեքիաթը. . Եւ իրենք աշակերտները չեն իմանում, որ զարմանալի հեքիաթ է այն հեքիաթը...»։

—Դէ պատմի՛ր։

—Ի՞նչը պատմեմ։

—Զարմանալի հեքիաթը։

—Դէ լսեցէք պատմեմ.

«Եւ պատմում էին այն զարմանալի հէքիաթը զարմանալի վարժապետի մասին... Այսպէս էր այդ զարմանալի հէքիաթը... Մի օր, այսպէս սիրուն, այսպէս պայծառ օր, այն զարմանալի վարժապետը դասարան հաւաքեց իր աշակերտները... Եւ այնտեղ նա պատմեց մի հէքիաթ այն աշակերտների մասին, որոնք շատ ուզեցին տեսնել իրենց զարմանալի վարժապետին, բայց չէկատրողացան և մի հէքիաթ յօրինեցին նրա մասին... զարմանալի հէքիաթ էր այն հէքիաթը...»։

—Յետոյ, յետոյ։

«Յետոյ, յետոյ զարմանալի հէքիաթ էր այն հէքիաթը... Եւ աշակերտները չըգիտէին, որ զարմանալի հէքիաթ է այն հէքիաթը...»։

—Ինչպէս էր զարմանալի։

—Զարմանալին ինչպէս կը լինի։

—Դէ պատմիր տեսնենք։

—Դէ լսեցէք, պատմեմ.

«Եւ վարժապետը պատմեց մի զարմանալի հէքիաթ իրենց ուսուցչին չըտեսնող աշակերտների մասին։ Նա պատմում էր այսպէս։ Մի օր, այսպէս սիրուն և այսպէս պայծառ օր, իրենց ուսուցչին չըտեսնող աշակերտները դուրս եկան սարը զբօսանքի։ Շատ մանուշակներ կային սարի վրայ և աշակերտները շատ խաղացին, շատ քաղեցին մանուշակները, շատ երգեցին ու յոգնեցին։ Յոգնեցին ու նստեցին սարի լանջի վրայ։ Փչում էր անուշ հովը և այնտեղ, սարի լանջի վրայ, նրանք յօրինեցին այն հէքիաթը այն զարմանալի վարժապետի մասին... Զարմանալի հէքիաթ էր այն հէքիաթը...»։

—Յետոյ, յետոյ։

«Յետոյ, յետոյ զարմանալի հէքիաթ էր այն հէքիաթը... Եւ իրենք աշակերտները չէին հասկանում, որ զարմանալի հէքիաթ է այն հէքիաթը...»։

—Ինչպէս։

—Անպէս։

—Դէ լաւ, հեքիաթը պատմիր։

—Դէ լաւ, լսեցէք պատմեմ.

«Եւ սարի լանջի վրայ մի աղջիկ պատմում էր այն զարմանալի հեքիաթը զարմանալի վարժապետի մասին։ Զարմանալի վարժապետ էլ այն վարժապետը. խաղի, զբոյցի ժամանակ վոքրանում, դառնում էր աշակերտ, իսկ դասի ժամանակ մեծանում, դառնում էր վարժապետ։ Աշակերտները շատ էին ուզում տեսնել նրան, բայց չէին կարողանում. և վարժապետը նրանց հետ նստել էր սարի լանջի վրայ, աղջիկը պատմում էր այն հեքիաթը, իսկ նրանք չէին տեսնում վարժապետին և հարցնում էին՝ ո՞ւր է վարժապետը... Զարմանալի հեքիաթ էր այն հեքիաթը...»։

—Յեռո՛յ, յեռո՛յ։

«Յեռոյ, յեռոյ զարմանալի հեքիաթ էր այն հեքիաթը. աշակերտները մինչև վերջն էլ չըհասկացան, որ զարմանալի հեքիաթ էր այն հեքիաթը.. »։

—Հասկացանք, հասկացանք,—հրճւանքով կանչեցին չորս կողմից և ծիծաղելով թափւեցին վարժապետի վրայ։

—Ահա զարմանալի վարժապետը, ահա զարմանալի վարժապետը։

—Ահա և ֆօկուսնիկ Աստղիկը, որ յօրինեց զարմանալի հեքիաթը զարմանալի վարժապետի մասին։

Եւ երկար չէր դադարում հրճւանքը սարի լանջի վրայ։ Զբօսանքը վերջացաւ, աշակերտները գալձան տուն։ Նրանք շատ դասեր, շատ խաղ ու զբօսանք ունեցան այնուհետև, բայց դեռ երկար չէին մոռանում այն զարմանալի հեքիաթը և միշտ պատմում էին նրա մասին։

Սեյրի



ԵԿԷՔ, ԱՆՈՒՇ ՏԵՆՉԵՐ

—

Ո՜Հ, ի՜նչ անուշ կարագանք,
Գարնանային մատաղ կեանքիս
Ի՜նչ կենսաքոյր խանդ, տենչանք.
Պապակ ոգիս, ծարաւ հոգիս
Կարօտ է ձեզ ամ՛են ժամ.
Եկէ՛ք կրկին դուք տենչավառ,
Եկէ՛ք, ձեզնով յագենամ։
Անմեղ սրտով մտայ աշխարհ,
Ձեր մէջ գտայ խինդ, երկրպանք.
Եկէ՛ք կրկին, անուշ տենչեր,
Ո՜Հ, առանց ձեզ չունեմ կեանք...

Յարութիւն Պետրոսեան

«ՄԱՅԻՍԵՆԻ ԹԱԳՈՒՀԻՈՒ» ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՆԸ

(Մանկական տօն)

Անգլիայում ամենասիրելի տօնը — «Մայիսեան Թագուհու» թագադրութեան տօնն է, որը հին ժամանակներից մնացած մի սովորութիւն է։

Այդ տօնին գլխաւոր դերը խաղում է «Մայիսեան ծառը», մեծ մասամբ — մի մատղաշ թըխտենի։ Ծառը արմատահան են անում, զարդարում են ժապաւէններով, պսակներով, ծաղիկներով ու ապա նորից տնկում են այն հրապարակի մէջ տեղը, որ նշանակուած է լինում մանկական պարերի և խաղերի համար։ Ի հարկէ, ծառի տեղափոխութիւնը կատարւում է մեծ հանդիսաւորութեամբ։ Թխտենին իրանով պատկերացնում է վերածնուող կեանքը, երկրի պտղաբերութեանը, նոր յարութիւն առած բնաւորութիւնը։

Մի ջին դարերում «Մայիսեան ծառի» տօնը բացառապէս մանկական տօն չէր, այլ ընդհանուր ժողովրդական մի տօն էր, որին միացնում էին նաև «ծաղիկների տօնը»։ Ասպետները, իշխանները, արհեստաւորները, քաղաքացիները — ամենքը հաւասարապէս մասնակցում էին այդ տօնին։

Այդ ուրախութիւններ ու խաղեր էին տեղի ունենում։ Ամենաբարձր պարգևը, որ սահմանում էր ճարպիկութեան, յժիր և զէնք բանեցնելու մէջ յաղթողը, լինում էր մի աքանչելի պսակ, որը մատուցանում էր նրան իրանց քաղաքի առաջի պետեցկուհին։ Յաղթողը՝ բացի դրանից՝ սահնում էր «Մայիսեան Թագաւորի», «Ծաղկեայ դուքսի» կոչում, որը տևում էր մի ամբողջ տարի, մինչև հետևեալ մայիս ամիսը։ Անցեալում այդ հին սովորութիւններից մնացել է միայն «Մայիսեան Թագուհու թագադրութեան» ծէսը։ Խաղերին մասնակցող երեխաներից ընտրում էին ամենաճարպիկ, գեղանի և ուշիմ ու սրամիտ աղջկանը, որին թագադրում էին միայն հետևեալ մայիսին։ Այդպիսով իւրաքանչիւր տարի կայանում է նոր թագուհու ընտրութիւնը և նախորդ տարւայ թագուհու թագադրութիւնը։

Ընտրութիւնը և թագադրութիւնը տեղի է ունենում աղմուկով, ցնծագին և մի առանձին շուքով, որովհետև մանուկները հագնում են գանազան հնադարեայ տարազով հագուստներ, գահ են կառուցանում և այլն։ Հանդիսատեսների համար այդ բոլորը ներկայացնում է շատ հետաքրքրական տեսարան։

Ջ. Տ.-Գ.



ՄԱՆԿԱՆ ՎԻՇՏԸ

(Ռուսերէնից)

—

Ո՜հ, որդեակ իմ, ինչ եղաւ քեզ.
Եւ մեր մէջ որպէս ստուեր,
Իբրեւ արիւնարբու բշնամի
Ո՞վ ներս սողաց։
Ով գողացաւ ինձնից քո սերը։
Դու ամենից խուսափում ես,
Ուր են նախկին խաղերդ.
Ինչի՞ մանկաւ պէս էլ չես ժպտում դու.
Այդ հասակիդ մէջ ինչի՞ ես տրտում։
Չար մտքեր...
Ո՜հ, որքան գուշա՛տ ես.
Մարած հայեացքդ ինչպէս տանջում է
Չարաբաստ սիրտս։
Դի՛, մի մտի՛կ արա անցնող զօրքերի
Վաշտերի շարքին.
Տես, ժողովուրդը ինչպէս սրտագին
Ողջունում է յաղթողին։
Դու էլ, որդեակ,
Այդպիսի պատիւ կը ստանաս մի օր։

—Ո՜հ, մայրիկ. այդպէս յաղթուրիւն
Ես չեմ ցանկանում.
Այնտեղ, զէնքերի վերայ
Ես արիւնի հետքեր եմ տեսնում։

Դրանից սարսո՛ւմ ես...։
Ուրեմն նայիր երկնակամարի պէս
Ջինջ, կապոյտ ծովին.
Որքա՜ն գրաւիչ, որքան շքեղ է նա.
Ինչպէ՞ս ծածանում են կոճակները զուարթ.
Ինչպէս ծփալով թաղխում են ծովափին։

—Ո՜հ, մայրիկ. այնտեղ ես տեսայ
Մեղդուածի մարմին.

Սրամիտ Ադամիկը

—

—Մայրիկ, ինչու մենք տէրունական աղօթքի մէջ, մի քանի ամսւայ կամ շաբաթւայ հացը չենք պահանջում, այլ մի օրւայ հաց ենք խնդրում։

—Սիրելիս, որովհետև միւս օրւայ համար Աստուած ինքը կը հոգայ։

—Ո՛չ, մայրիկ. այդ սխալ է։ Այլ նրա համար ենք մենք միմիայն մի օրւայ համար խնդրում հացը, որ չբողբոջանի, հասկացար, մայրիկ, որ չբողբոջանի և թաժան (թարս) լինի։

Սար—իս

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

—

Փուչ աշխարհի
Համ զարդն եմ
Զարդարողն եմ.
Ցգեղ-մգեղ
Մի բան եմ,
Զորս տառանի
Մի վանկ եմ,

Տմարդների
Սիրածն եմ,
Ալ կարդաս
Քո անունն եմ,
Թարս որ կարդաս
Տմարդների
Պահողը եմ։

ԱՂԲԻՒՐԻ № 2 «Զեռնոտու պայմանն» *Թւաբանական խնդրի վճիռը՝*

Չքաւոր մարդը պիտի վճարէ 465 ր.

Հարուստ վաճառականը պիտի վճարէ 2,684,354 ր. 55¾ կ։

Ուրեմն չքաւորը պիտի շահի 2,683 889 ր. 55¾ կ.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ

Տպարան «ԼՊՕՒԱԿ», Թիֆլիս, Դաւթովսկայա փող. № 3.

ՆՈՐԱԳՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

ԺըդագրուԹեանս մէջ ստացուել են՝ Սեդրակ Մանդինեան՝ «Ռուսերէն հատընտիր հատուածներ հայերի համար» (Начальная рус. христом. для армянъ) *Ա. գրքուկ, գինը 55 կ. Էմ. ք. Նազարեանցի ԹարգմանուԹեամբ՝ Լ. Տալստոյ—1) «Աղօթք» 5 կ., 2) «Սեռային յարաբերուԹիւն» 12 կ., 3) «Սէր» 8 կ., 4) պրօֆ. Լ. Բուրներշտեյն—«Առողջապահիկ կանոններ» 7 կ.*

Ա. Շտեյնբ Ֆոգել—«Къ реформѣ орѳографіи», 30 կ.

Յով. Սալովեան՝ «Հարազատ գծեր», 15 կ.

Եակոբ Գոգեբաշեանի՝ «Ի՞նչ արաւ օրօրոցի երգը», վրացերէնից պատկերազարդ Թարգ. Ղ. կ.—10 կ.

Յուսիկ եպիսկոպոս՝ «Անապատականներ և վանականուԹիւն», 40 կ.

Լ. Պետրով՝ (№ 25 «Յառաջի» գրադարան) «Երկու ծրագիր», ռուսեր. Թարգմ. Գ.ար. Պապովեան, 20 կ.

Յ.ր. Թումանեան՝ «Русско-армянскій словарь» (Ռուս-հայ բառարան տարրական, քաղաքային և միջնակարգ դպրոցների դասընԹացուողների համար, հրատ. Կով. շրջ. հոգաբարձուԹեան) գինը 75 կ.

Ար. Սպարապետեանց՝ «Թւաբանական խնդիրներ և օրինակներ», IV տարի. պրակ Գ, 30 կ.

Դոկտ. Յովհ. Արբիճեան՝ «Տունկերը և անոնց հայերէն անուանները», գինը 1 ֆր. 25 սանտ.

Բժ. Ա. Բուդաղեան՝ «ՈւԹժամեայ բանուորական օր», 10 կ.

Յակոբ Յակոբեան՝ «Աշխատանքի երգեր», (բանաստեղծ.) 20 կ.

Բեն. Տէր-Գրիգորեան՝ «ԱզատուԹեան խանդ», (բանաստեղծ) 20 կ.

Ա. Զաճեան՝ «ԲանաստեղծուԹիւններ», II պրակ, 10 կ.

Գ. Ղազարեան՝ «Հող և նրա նշանակուԹիւնը», (հրատ. Գ. Գալուստեանի № 22) 20 կ.

Մարիկ՝ «Իմ երգերից» (բանաստեղծ) Ա մաս—30 կ.

Լեւոն Մանուէլեան՝ «ԲանաստեղծուԹիւններ և պօէմներ», գիրք երկրորդ, 40 կ.

Ռ. Խան-Ազատ՝ «Ինչ է սահմանադրուԹիւնը», (հրատ. Գէորգ Խանազատեանի) 10 կ.

Կառուցկի «Ներկայացուցչական կառավարուԹիւն», Թարգմ. Ռ. Խան-Ազատ, (հրատ. Գ. Խանազատեան) 40 կ.

Իշխ. Գ. Մ. Թումանով՝ «Բարձագոյն ուսումնարանները Թիֆլիսում», Թարգմ. Կ. Զալալեան՝ (արտատպած «Մուրճ»-ից) 10 կ.

«Կանոնագիր Պուէնարիոյ հայ ուսուցչական միուԹեան», մշակած Պուէնարիոյ հայ ուսուցիչ. առաջին համաժողովի մէջ՝ի Վառնա։

Համառօտ տեղեկագիր Բագւայ եկեղեց. տարրական Մեսրոպեան և Հռիփսիմեան դպրոցների 1905|6 ուսումնական տարեշրջանի։

Շարունակվում է սկսյալ 1907 թ.

հաժանորդագրություն ընդ

ԱՂԲԻՒՐ եւ ԳԵՂԱՓՆՋԻԿ

պատկերազարդ հանդէսների

Տարեկան բաժանորդագինը իւրաքանչիւրին առանձին 3 ր. (արտասահման 5 ր.), երկուսը միասին 5 ր. (արտասահման 10 ր.)

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ» *կամ* «Таразъ».
Tiflis, Caucase, Redaction «Agbur» *կամ* «Taraz».

ՏՊԱՐԱՆ ԷՊՈՒՍ

(Գանձասկայա փողոց, տ. № 3)

Մոսկս Վարդանեանի տպարանը վերաբացուած ներկայ հիմունքների վրայ «ԷՊՈՒՍ» անունով, ընդարձակած և բարեկարգուած ընդունում է տպարանական ամեն տեսակ պատուէրներ: Հայերէն, ռուսերէն, վրացերէն, թիւրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն ընտիր նոր տառեր մեծ քանակութեամբ: Տպարանական նորագոյն գարդեր, ընտիր մուր, խնամքով տպագրութիւն, հմուտ տպագրիչներ: Պատուէրները կատարուում են արագ եւ ճշտութեամբ: Տեսարար՝ ԳՆԵՐԸ ՉԱՓԱԻՈՐ: (3—1)

Պետական երկդասեան դպրոցների ուսուցչական ցենզ ունեցող

մէկը ցանկանում է պաշտօն

հայկական ծխական դպրոցներում:

Դիմել՝ Тифлисъ, «Агбюр-Тараз» *Մ. ԴՈՒՐԳԱՐԵԱՆԻՆ:* (1—1)



ՕԳՏԻԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ ՏՐԻԿՕ

ՊՐԻՄԱ

Զը հաւանելու դէպքում յետ է ընդունւում: Կտորը սև կամ սև մոխրագոյն 4½ արշ. տղամարդու համար, էլէգանտ, ամբողջ հագուստացու, որ ուղարկւում է վերադ. վճարով 5 ր. 25 կ. և ընտիր տեսակը 8 ր. 75 կ. միանգամից երեք հագուստացու պատուիրողներին աստառացուն ձրի է ուղարկւում: Դիմել՝ Фабрика шерстяныхъ издѣлій Т-во ПРОГЕСЪ, ЛОДЗЬ.